ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ ԱՐԱՅԻԿԻ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱԶԳԵՐԻ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԺԲ.00.06 – «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2024

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ

ГРИГОРЯН МАРИАМ АРАИКОВНА

ПРОБЛЕМА МЕЖДУНАРОДНО-ПРАВОВОЙ ЗАЩИТЫ ПРАВ ЧЕЛОВЕКА В КОНТЕКСТЕ ОСУЩЕСТВЛЕНИЯ ПРАВА НАЦИЙ И НАРОДОВ НА САМООПРЕДЕЛЕНИЕ

АВТОРЕФЕРАТ

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности

12.00.10 -«Международное право»

Ереван – 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր **Վ. Հ. Հովհաննիսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր **Բ.Ա.Շահնազարով**
իրավ. գիտ. թեկնածու **Լ.Օ.Հակոբյան**

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թվականի հունիսի 29-ին, ժամը 11:00 -ին, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Իրավագիտության թիվ 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թվականի մայիսի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, իրավ. գիտ. թեկնածու **Ջ.Հ.Հայրապետյան**

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук,
профессор **В.А.Оганесян**

Официальные оппоненты: доктор юридических наук,
профессор **Б.А.Шахназаров**
кандидат юридических наук **Л.О.Акопян**

Ведущая организация: Академия государственного управления Республики Армения

Защита состоится 29-ого июня в 11:00 на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Российско-Армянском (Славянском) университете (0051, г. Ереван. ул. Овсеп Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Государственного образовательного учреждения высшего профессионального образования «Российско-Армянский (Славянский) университет».

Автореферат разослан «27» мая 2024 года

Ученный секретарь специализированного совета, канд.юрид. наук **Дж.А.Айрапетян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ի տարբերություն ոչ մեծ թիվ կազմող երկրների, որոնք ձևավորվել են շատ դարեր առաջ, ներկա պետությունների ճնշող մեծամասնությունը կայացել են հիմնականում XIX-XX դարերում՝ ազգերի և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի իրացման արդյունքում: Սակայն, ԽՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների փլուզումից անմիջապես հետո մետրապոլիաները բացահայտ հրաժարվեցին կատարել իրենց կազմում գտնվող ազգային սուբյեկտների ինքնորոշման իրավունքի վերաբերյալ միջազգային իրավունքի ***jus cogens*** սկզբունքի հրամայական պահանջը, փորձելով հիմնավորել, որ դա անջատողականության դրսևորում է և հակասում է պետության տարածքային ամբողջականությանը հարգելու սկզբունքին: Ավելին, ինքնորոշման ձգտող ժողովրդի դեմ պայքարը ներկա պատմական փուլում, ***inter alia***, ուղեկցվում է նաև նրա քաղաքացիների իրավունքների և ազատությունների զանգվածային խախտումներով:

Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վերաբերյալ հայաստանյան և օտարերկրյա հեղինակների կողմից բավականին ծավալուն և լուրջ հետազոտություններ արդեն կատարվել են, սակայն վերջիններս հիմնականում վերաբերում են ինքնորոշման իրավունքի քաղաքական և միջազգային իրավական ասպեկտներին, մինչդեռ լուրջ ուսումնասիրության կարիք ունի ինքնորոշման գործընթաց սկսած և դեռևս չճանաչված պետության կարգավիճակում գտնվող երկրներում ապրող մարդկանց իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը:

Թեկնածուական ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ի տարբերություն մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության վերաբերյալ հրապարակված ուսումնասիրությունների, ատենախոսության հեղինակը փորձել է մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հիմնախնդիրն ուսումնասիրել հենց չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի համատեքստում: Ատենախոսական հետազոտության մեջ կոնկրետ օրինակներով և փաստերով հիմնավորվել է, որ մարդու իրավունքների պաշտպանության առկա միջազգային գործիքակազմն ի զորու չէ երաշխավորել ազգային-ազատագրական պայքարի փուլում գտնվող ժողովրդի կազմի մեջ մտնող առանձին վերցրած մարդու անձնական իրավունքները և ազատությունները: Մինչդեռ, ինչպես ցույց տվեց հատկապես ԽՍՀՄ-ի և նախկին Հարավսլավիայի

տարածքում իրենց ինքնորոշման իրավունքի համար պայքարող ազգերի և ժողովուրդների պայքարի փորձը, պայքարի առաջին պահից մինչև սեփական պետության հռչակման և դրա միջազգային իրավական ճանաչման ավարտը, պայքարող ազգի կամ ժողովրդի բնակչության կազմի մեջ մտնող անհատներն ըստ էության զրկվում են միջազգային հանրային իրավունքի նորմերով պաշտպանվելու հնարավորությունից:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Թեկնածուական ատենախոսության հետազոտության հիմնական նպատակը՝ ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացման արդյունքում դրսևորվող մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հետ կապված հիմնախնդիրների բացահայտումը և ուսումնասիրությունն է, ինչպես նաև ազգային-ազատագրական պայքարի և ինքնիշխան պետություն ստեղծելու ճանապարհին ԽՍՀՄ-ի, նախկին Հարավսլավիայի փլուզման արդյունքում ձևավորած չճանաչված պետություններում, այդ թվում՝ Արցախի Հանրապետությունում մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հետ կապված հիմնախնդիրների բացահայտումն է:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար ատենախոսական հետազոտության մեջ փորձ է արվել լուծել հետևյալ խնդիրները՝

- հետազոտել մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության գործող համակարգի ծագումը և զարգացումը,
- հետազոտել ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրավաբանական բնույթը, դրա ձևավորման պատմական փուլերը և միջազգային իրավական բովանդակությունը՝ ***jus cogens*** իրավական սկզբունքների համատեքստում,
- ուսումնասիրել ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքից ածանցյալ՝ մարդու իրավունքների պաշտպանության դեմ ուղղված մարտահրավերները և դրանց չեզոքացման իրավական միջոցները,
- միջազգային իրավունքով երաշխավորվող մարդու հիմնական իրավունքների և ազատությունների դադարեցման, կասեցման կամ օտարման ու չճանաչված պետությունների իրավազորության հետ կապված հիմնախնդիրների վերհանումը,
- ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի տեսանկյունից վերլուծել մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի իրավաբանական բովանդակությունը,
- ուսումնասիրել չճանաչված պետությունների բնակչության ազգային-ազատագրական պայքարի միջազգային հանրային իրավունքի նորմերին համահունչ լինելու հարցը,

- վերլուծել Արցախի Հանրապետությունում և մյուս չճանաչված պետություններում անհատի իրավունքների և օրինական շահերի միջազգային իրավական պաշտպանության ու դրանց ապահովման հիմնահարցերը:

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի, դրա միջազգային իրավական բովանդակության և ինքնորոշման իրավունքի իրացման առանձնահատկությունների մասին առկա են բազում արտասահմանյան ու հայաստանյան գիտական հետազոտություններ: Մինչդեռ, իրենց ինքնորոշման իրավունքն իրականացրած, սակայն դեռևս չճանաչված պետության կարգավիճակում գտնվող երկրների սուբյեկտայնության և նրա քաղաքացիների միջազգային իրավական կարգավիճակի վերաբերյալ աշխատությունները գրականության մեջ սակավ ենք հանդիպում:

Հետազոտության տեսական հիմքը ներառում է Թ.Հոբսի, Ջ.Լոկի, Ժ.Ժ.Ռուսոյի, Հ.Հրոցիուսի, Է. դե Վատտելի, Վ.Լենինի, Վ.Վիլսոնի, Ա.Կասեսի, Ջ.Հազարդի, Ա.Կոբբանի, Ռ.Էմերսոնի, Կ. Կոլյարի, Ս. Իգլտոնի, Մ. Շոուի, Ռ.Լիի, Յու.Բասեղովի, Գ.Աբի-Սաաբի, Ա.Կովալյովի, Ա.Աբաշիձեի, Վ.Հովհաննիսյանի, Վ.Տոլստիխի, Վ.Քոչարյանի, Վ.Վալեևի և այլոց աշխատանքները:

Ատենախոսության նորմատիվային հիմքը: Թեկնածուական ատենախոսության նորմատիվային հիմքը կազմում են ՄԱԿ-ի կանոնադրությունը, ՄԱԿ-ի հովանու ներքո ընդունված մարդու իրավունքների վերաբերյալ հիմնարար փաստաթղթերը, ինչպես նաև ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևերը, ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումները:

Ուսումնասիրման առարկա են դարձել նաև Մարդու իրավունքների և հիմանարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան ու դրա կից արձանագրությունները, ինչպես նաև ՄԻԵԴ-ի մի շարք նախադեպային նշանակության որոշումները:

Հետազոտության մեջ վերլուծության առարկա են դարձել չճանաչված պետությունների, այդ թվում նաև Արցախի Հանրապետության՝ մարդու իրավունքների վերաբերյալ ներպետական իրավական ակտերը:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր (ինդուկցիա, դեդուկցիա, անալիզ, սինթեզ), այնպես էլ հատուկ (համակարգային վերլուծության, պատմական) մեթոդները: Ելնելով թեկնածուական ատենախոսության առանձնահատկությունից՝

հետազոտության ընթացքում առավելագույնս օգտագործվել է համեմատական իրավական վերլուծություն՝ տարբեր չճանաչված պետություններում մարդու իրավունքների հնարավոր խախտումների առնչությամբ: Այս մեթոդների համակցված կիրառությունն հնարավորություն է տվել բացահայտել մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության միջոցներից փաստացի զրկված անձանց իրավունքների պաշտպանության հիմնախնդրի էությունը, վերհանելով դրանց իրավական նախադրյալները, առաջարկել ստեղծված իրավական փակուղուց դուրս գալու հնարավոր լուծումներ:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է թեկնածուական ատենախոսության թեմայում: Հատուկ հումանիտար իրավական ամբողջական ուսումնասիրության միջոցով հայաստանյան իրավագիտության մեջ առաջին անգամ փորձ է արվում բացահայտել իրենց ինքնորոշման իրավունքն իրագործած, սակայն դեռևս չճանաչված պետության կարգավիճակում գտնվող երկրների քաղաքացիների իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հետ կապված հիմնախնդիրները, ինչպես նաև չճանաչված պետությունների քաղաքացիների իրավունքների խոցելիության պատճառները: Ատենախոսությունում քննարկման առարկա են դարձել նաև այն կոնկրետ իրավունքները և ազատությունները, որոնք նման տարածքներում առավել հաճախ են ոտնահարվում, և որոնց պաշտպանությունը միջազգային իրավական կառուցակարգերի միջոցով բավականին խնդրահարույց է:

Վերլուծության են ենթարկվել նաև Արցախի Հանրապետության բնակչության ազգային-ազատագրական պայքարի՝ միջազգային հանրային իրավունքին համահունչ լինելու գործընթացը՝ միջազգային իրավունքի նորմերի և ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի համապատասխան բանաձևերի լույսի ներքո: Հեղինակն անդրադարձել է նաև Արցախի Հանրապետությունում անհատի իրավունքների և օրինական շահերի միջազգային իրավական պաշտպանության հարցին:

Հետազոտության արդյունքում հեղինակի կողմից կատարվել են մի շարք տեսական ու գործնական բնույթի առաջարկություններ, ուղղված չճանաչված պետությունների միջազգային իրավասուբյեկտայնության և նրանց քաղաքացիների իրավունքների միջազգային իրավական պաշտպանության արդյունավետության բարելավմանը:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Ազգերի և ժողովուրդների կողմից իրենց հասարակական, քաղաքական և պետական կյանքն ինքնուրույն կազմակերպելու հրամայականը, որպես բնական և անօտարելի իրավունք, ձևավորվեց XVIII դարում՝ ամերիկյան և ֆրանսիական հեղափոխությունների

արդյունքում, քաղաքական սկզբունքի տեսքով: Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների ընթացքում գաղութատիրության դեմ ծավալված պայքարը նպաստեց, որ ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը քաղաքական սկզբունքից աստիճանաբար փոխակերպվեց միջազգային իրավական սկզբունքի և ամրագրվեց ՄԱԿ-ի կանոնադրությունում և այլ կարևորագույն միջազգային իրավական փաստաթղթերում: Ատենախոսը, վերլուծելով ինքնորոշման իրավունքի, որպես ***jus cogens*** սկզբունքի ներկա միջազգային իրավական բովանդակությունը, հիմնավորում է, որ այսօր մետրապոլիա հանդիսացող պետությունները կոպտորեն խախտում են ժամանակակից միջազգային իրավունքի պահանջները և ինքնորոշման իրավունքին մոտենում են գաղութային պետությանը բնորոշ մեծապետական և նվաճողական հոգեբանության դիրքերից: Այս հանգամանքն ոչ միայն էականորեն աղավաղում է ժամանակակից միջազգային իրավունքի ուղղվածությունը և առաջադիմական էությունը, այլև խարխլում է ներկա աշխարհակարգը և նրա հետ սերտորեն փոխկապակցված միջազգային իրավակարգը: Ատենախոսը գտնում է, որ ինքնորոշման սկզբունքի միջազգային իրավական բովանդակության աղավաղումը և քաղաքականացումը այնպիսի վտանգավոր հետևանքների պատճառ են հանդիսացել, ինչպիսիք են՝ ***ինքորոշման հենքի վրա տեղի ունեցող պատերազմները*** և ***ինքնորոշման համար պայքարող ժողովրդի կազմի մեջ գտնվող անհատների իրավունքների և ազատությունների զանգվածային խախտումները***:

Նշված հիմնախնդիրներն, ի թիվս այլնի, հիմնականում պայմանավորված են այն հանգամանքով, որ ՄԱԿ-ի կանոնադրությունը և ինքնորոշման իրավունքի վերաբերյալ մյուս միջազգային իրավական ակտերը ճանաչելով տվյալ իրավունքի անօտարելի բնույթը, միջազգային իրավական որևէ կոնկրետ ընթացակարգ չեն նախատեսում՝ ինքնորոշման իրավունքն ոչ թե ռազմաքաղաքական պայքարի, այլ իրավական հիմքի վրա լուծելու համար, ինչի պատճառով, ինքնորոշման իրավաբանական իրավունքն իրացման առաջին իսկ պահից փաստացի տեղափոխվում է քաղաքական պայքարի դաշտ իր բոլոր բացասական և վտանգավոր հետևանքներով: Որպես ապացույց կարելի է վկայակոչել Կոսովոյի, Լեռնային Ղարաբաղի, Ղրիմի, Դոնեցկի, Լուգանսկի և բազմաթիվ այլ օրինակներ, երբ ինքնորոշման իրավունքն իրականացրած ժողովուրդը ոչ միայն չի կարողանում տրամաբանական ավարտին հասցնել իր այդ իրավունքն այլև վերածվում է պատերազմի թատերաբեմի:

2. Ժամանակակից միջազգային իրավունքի իրավաբանական բնույթը միանշանակ ենթադրում է, որ ինքնորոշման իրավունքի իրացման գործընթացը մինչև դրա վերջնական ավարտը պետք է տեղի ունենա բացառապես միջազգային իրավունքի շրջանակում՝ զերծ մնալով քաղաքական տարաբնույթ բաղադրիչներից: Մինչդեռ, ինքնորոշման իրավունքի կարևորագույն փուլը, այն է ինքնորոշվող ժողովրդի կողմից իր սեփական պետականության ձևավորման և դրա միջազգային սուբյեկտայնության ճանաչման ապահովումը, կարելի է ասել չի հանդիսանում միջազգային իրավունքի պաշտպանության առարկա: Մինչդեռ, երբ արտաքին ինքնորոշման իրավունքի իրացման արդյունքում ***պետությունների միջազգային ընտանիքում հայտնվում է նոր սուբյեկտ՝ չճանաչված պետություն,*** ինքնորոշման համար պայքարի իրավաբանական փուլն ավարտվում է և սկսվում է նորաստեղծ պետության հաջորդ՝ ճանաչման փուլը, որն իր էությամբ զուտ քաղաքական գործընթաց է, և ուղեկցվում է բազմաթիվ վտանգավոր և անկանխատեսելի դրսևորումներով: Ատենախոսական հետազոտության հեղինակը գտնում է, որ չճանաչված պետությունների ճանաչման ինստիտուտը, և հատկապես նրա միջազգային իրավասուբյեկտայնության հարցը բարեփոխման կարիք ունի:

3. Ճանաչված չլինելը փաստացի նշանակում է «մեկուսացում» միջազգային հանրությունից, ինչը ստեղծում է մի շարք անբարենպաստ հետևանքներ տվյալ պետության և նրա բնակչության համար: Ակներև օրինակ է ԽՍՀՄ փլուզումից հետո առաջացած, ներկայումս չճանաչված՝ Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության, Հարավային Օսիայի և Աբխազիայի Հանրապետության, Արցախի Հանրապետության և մյուս չճանաչված պետությունների փորձը: Նկատի ունենալով, որ չճանաչված պետությունները և նրանց իրավազորության ներքո գտնվող անձինք, ի տարբերություն ճանաչված պետությունների, առավել խոցելի են, ատենախոսը գտնում է, որ ՄԱԿ-ի կողմից համապատասխան քայլեր պետք է ձեռնարկվի չճանաչված պետությունների միջազգային պաշտպանվածության ամրապնդման նպատակով: Մասնավորապես, կարելի է չճանաչված պետություններին տրամադրել՝ «***սահմանափակ միջազգային իրավասուբյեկտի***» կարգավիճակ, համաձայն որի՝ «Սահմանափակ միջազգային իրավասուբյեկտ»-ը չի կարող անդամակցել ՄԱԿ-ին և տարածաշրջանային ռազմաքաղաքական միջազգային կազմակերպություններին, չի կարող *դե յուրե* դիվանագիտական հարաբերություններ հաստատել այլ պետությունների հետ: Սակայն, չճանաչված պետությունը պետք է իրավունք ունենա իր և իր իրավազորության ներքո գտնվող անձանց ֆիզիկական անվտանգությունն

ապահովելու խնդրանքով դիմել ՄԱԿ-ի մարմիններին կամ շահագրգիռ պետություններին, չճանաչված պետության տարածքում զինված ընդհարման դեպքում պետք է լիարժեք գործեն միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը, չճանաչված պետության հանրային իշխանության մարմինները պետք է իրավունք ունենան դիմել մարդու իրավունքների պաշտպանության միջազգային բոլոր կառույցներին, այդ թվում մարդու իրավունքների միջազգային դատարաններին:

4. Մարդու և քաղաքացու իրավունքների միջազգայնացումը Երկիր մոլորակում քաղաքակիրթ հասարակության ձևավորման կարևորագույն նախադրյալներից է: Այսօր ցանկացած պետության ժողովրդավար լինելու կամ չլինելու հանգամանքը պայմանավորված է երկու փոխկապակցված հանգամանքով, **առաջին**՝ ինչ վիճակում է գտնվում տվյալ երկրում մարդու իրավունքների պաշտպանության վիճակը, և **երկրորդ**՝ տվյալ երկրիրն որքան հանդուրժողական է այլ երկրներում տեղի ունեցող մարդու իրավունքերի խախտման փաստերի նկատմամբ: Ընդ որում, այլ երկրներում մարդու իրավունքերի խախտման փաստերի նկատմամբ հանդուրժողական չլինելը ոչ թե սուբյեկտիվ գործոններով է պայմանավորված, այլ միջազգային կոնվենցիոն պարտավորություն է: Այս փաստը ուղղակի բխում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թ. կոնվենցիայի 33-րդ հոդվածից, համաձայն որի՝ «Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է Դատարան դիմել Կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների դրույթների ցանկացած ենթադրվող խախտման հարցով, որը թույլ է տվել մեկ այլ Բարձր պայմանավորվող կողմ»: Ավելին, մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական պայմանագրերն ունեն ***erga omnes*** բնույթ, համաձայն որի ունիվերսալ պայմանագրերով ստանձնած պարտավորություններն ինքնիշխան պետությունները կրում են ողջ միջազգային հանրության առջև: Անվիճելի է, որ «***ողջ միջազգային հանրության***» առջև պետությունները պատասխանատվություն պետք է կրեն նաև չճանաչված պետության տարածքում բնակվող «մարդ-անհատի» իրավունքների միջազգային իրավական պաշտպանության համար: Ասվածի համատեքստում ատենախոսը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության կողմից Արցախի չճանաչված պետության քաղաքացիների իրավունքների պաշտպանությունն ոչ միայն ազգային համերաշխության արդյունք է, այլ նաև հանդիսանում է Հայաստանի միջազգային իրավական պարտավորություն:

5. Ատենախոսը գտնում է, որ անկախ նրանից, մարդն ապրում է միջազգայնորեն ճանաչված երկրում, խնամարկյալ կամ ինքնիշխանության սահմանափակումով պետական կազմավորման տարածքում, պիտի օգտվի մարդու հիմնարար բոլոր իրավունքներից, այդ թվում նաև իրավունքների պաշտպանության միջազգային կառուցակարգերից, քանի որ, մարդը մեղավոր չէ, որ երկիրն որտեղ ինքն ապրում է դեռևս ճանաչված չէ պետությունների միջազգային ընտանիքի կողմից: Չնայած, չճանաչված պետություններում մարդու իրավունքների պաշտպանության բարելավմանն ուղղված պետական մարմինների ջանքներին, դեռևս առկա են մարդու իրավունքների խախտումների բազմաթիվ դեպքեր: Ուստի՝ երբ ներքին կառուցակարգերի միջոցով անձը չի կարողանում իրականացնել իր իրավունքների պաշտպանությունը, ատենախոսի կարծիքով, ՄԻԵԴ-ը պետք է իրավունք ունենա քննության առնել չճանաչված պետություններում բնակվող անձանց իրավունքների խախտման կոնկրետ փաստերի վերաբերյալ գանգատները:

6. Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը հանդիսանալով ***jus cogens*** նորմ, որևէ կերպ տարբերակում չի դնում ճանաչված և չճանաչված պետությունների քաղաքացիների միջև: Անկախ նրանից պետությունը ճանաչված է թե ոչ՝ անհատը, նրա իրավունքները և հիմնարար ազատությունները գտնվում են միջազգային հանրային իրավունքի պաշտպանության ներքո: Բացի այդ, մարդը բարձրագույն արժեք է, որևէ կերպ չի կարելի մարդուն տարբերակել այն հիմքով թե՞ նա ճանաչված պետության քաղաքացի է թե՞ ոչ: ՄԱԿ-ի կանոնադրությունում և այլ միջազգային իրավական համընդգրկուն փաստաթղթերում ամրագրված «յուրաքանչյուր ոք», «անձ», «մարդ» հասկացություններն ունեն համընդհանուր նշանակություն, դրանք ներառում են բոլոր մարդ արարածներին, անկախ որ երկրում են նրանք բնակվում, անկախ նրանց բնակության պետությունը միջազգայնորեն ճանաչված է թե ոչ: Եվ դա բնական է, Երկիր մոլորակի վրա չկա թեկուզ մեկ քառակուսի կիլոմետր, որի վրա չտարածվի ՄԱԿ-ի կանոնադրության և մարդու իրավունքներ վերաբերյալ մյուս միջազգային իրավական համընդգրկուն փաստաթղթերի իրավաբանական ներգործությունը: Հետևաբար, ինքնորոշման իրավունքի իրականացման համար պայքարող մարդկանց իրավունքների պաշտպանության հստակ միջազգային կառուցակարգերի բացակայությունը հաճախ դառնում է երկակի չափորոշիչների քաղաքականության կիրառման նախադրյալ, ինչը հակասում է թե՛ սահմանադրական, և թե՛ միջազգային իրավական նորմերին և սկզբունքներին: Անշուշտ, նման իրավիճակը էապես հակասում է ժամանակակից միջազգային իրավունքի հիմքում ընկած ՄԱԿ-ի

Կանոնադրության ոգուն և տառին: Ինչպես նշվում է ՄԱԿ-ի Կանոնադրության 1-ին հոդվածի 3-րդ կետում՝ ՄԱԿ-ի նպատակներից է իրականացնել միջազգային համագործակցություն բոլորի համար մարդու իրավունքների և հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի տարածման և խրախուսման գործում անկախ ցեղից, սեռից, լեզվից կամ դավանանքից:

7. Ինչպես վկայում են Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմի և Ադրբեջանի կողմից 2022թ. դեկտմբերի 12-ին կազմակերպած շրջափակման և 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո առաջացած օրինակները, չճանաչված պետությունների քաղաքացիների իրավունքների միջազգային իրավական պաշտպանվածության հարցն ավելի շատ պայմանավորված է քաղաքական-իրավական գործոններով: Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում, ոչ մի պետություն և ոչ մի միջազգային հասարակական կամ միջկառավարական կազմակերպություն չդատապարտեց ադրբեջանա-թուրքական ագրեսիան, այն դեպքում երբ այդ պատերազմի ընթացքում խախտվեցին միջազգային իրավունքի բազմաթիվ ***jus cogens*** սկզբունքեր, ինչպես նաև Ժնևյան կոնվենցիաների նորմեր: Ավելին, երբ Հայաստանի Հանրապետությունը դիմեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին կապված Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքը փակելու և Արցախի բնակչությանն արտաքին աշխարհից մեկուսացնելու հարցով, 2022թ. դեկտեմբերի 20-ի Անվտանգության խորհրդի նիստի ժամանակ ինչպես մշտական, այնպես էլ ոչ մշտական անդամ պետությունները նշել էին, որ խորապես մտահոգված են Լաչինի միջանցքի օգտագործման հարցում ստեղծված խոչընդոտներով և այս իրավիճակի մարդասիրական աճող հետևանքներով: Ընդգծելով, որ Լաչինի միջանցքի օգտագործման խոչընդոտները հետ են շպրտում խաղաղ գործընթացը՝ խաթարելով միջազգային վստահությունն այս գործընթացի նկատմամբ, և որ այս իրավիճակը կարող է հանգեցնել պոտենցիալ սարսափելի մարդասիրական հետևանքների, Անվտանգության խորուրդն ընդամենը բավարարվեց կոչ անելով Ադրբեջանի կառավարությանը «անհապաղ և անվերապահորեն ապաշրջափակել Լաչինի միջանցքը»: Բնականաբար, Ադրբեջանն անհաղորդ մնաց այդ կոչին և Արցախը շարունակեց մնալ շրջափակված դրանից բխող բնակչության համար ծանր հետևանքներով: Մինչդեռ, ՄԱԿ-ը կարող էր Ադրբեջանի նկատմամբ ներգործել իր ավելի ազդեցիկ գործիքակազմով և անմիջապես կանխեր մարդասիրական աղետը: Վերոնշյալի հիման վրա

ատենախոսը գտնում է, որ ինչպես Արցախյան 44 - օրյա պատերազմի ընթացքում միջազգային հանրության լռությունը, այնպես էլ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «***անպտամ***» կոչը պայմանավորված էին Հայաստանի Հանրապետության շուրջը տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումներով: Ակնհայտ է, որ չճանաչված պետության քաղաքացու իրավունքների պաշտպանության գլխավոր երաշխիքը ոչ թե ժամանակակից միջազգային իրավունքն է իր ողջ գործիքակազմով, այլ տվյալ չճանաչված պետության հետ կապված «մեծ» պետությունների քաղաքական ակնկալիքները: Ատենախոսական հետազոտության մեջ փորձ է արվում հիմնավորել, որ չճանաչված պետությունների ճանաչման և նրա քաղաքացիների իրավունքների պաշտպանության հարցում պետությունների հայեցողական ազատությունը չի ենթադրում, որ նրանք ***inter alia***, կարող են ղեկավարվել նաև քաղաքական շահերով: Ժամանակակից միջազգային իրավունքի գլխավոր նվաճումը մարդու իրավունքների երաշխավորման հարցում կայանում է նրանում, որ պետությունները կաշկանդված են մարդու և ժողովրդի բնական և անօտարելի իրավունքներով և իրավասու չեն գործել քաղաքական նպատակահարմարությամբ:

8. Ատենախոսը գտնում է, որ Ադրբեջանի նման անպատժելի գործելաոճը լուրջ նախադեպ կհանդիսանա հետագայում լեգիմիտացնելու համար մետրապոլիաների կողմից ինքնորոշման ձգտող ժողովրդի նկատմամբ բռնության իրականացման և մարդու իրավունքների զանգվածային խախտումների համար: Հետևաբար, անհրաժեշտ է ՄԱԿ-ի համակարգում ձևավորել արդյունավետ կառուցակարգ՝ աջակցելու ինքնորոշման իրավունքն իրագործող ժողովրդին և կանխելու ինքնորոշման համատեքստում հնարավոր զինված ագրեսիաները:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտության ընթացքում ձևավորված եզրահանգումներն ու հիմնական դրույթները կարող են օգտագործվել չճանաչված պետությունների միջազգային իրավասուբյեկտության հիմնախնդիրն ուսումնասիրող մասնագետների կողմից, ինչպես նաև այն անձանց կողմից, ովքեր զբաղվում են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ոլորտում գործող միջազգային կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարելավման հարցերով: Ատենախոսության դրույթները և եզրահանգումները կարող են օգտագործվել նաև չճանաչված պետությունների հանրային մարմինների, հատկապես՝ արտաքին հարաբերությունների կարգավորման հարցերում ներգրավված գերատեսչությունների, ինչպես նաև մարդու իրավունքների

պաշտպանությամբ զբաղվող հասարակական և քաղաքական կազմակերպությունների կողմից: Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել բարձրագույն ուսումնական հաստատություններում հետազոտության առարկայի հետ առնչվող դասընթացների դասավանդման ժամանակ, ինչպես նաև այլ գիտահետազոտական գործունեության ընթացքում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնում, որի նիստերի ընթացքում քննարկվել և գրախոսվել են ատենախոսության հիմնական դրույթները: Ատենախոսության տեսական եզրահանգումներն ու դրույթները իրենց արտացոլումն են գտել հեղինակի թվով 9 գիտական հոդվածներում: Հետազոտության որոշ ոլորտներ ներկայացվել են չորս միջազգային գիտաժողովներում (2017թ. Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները, 2019թ. և 2021թ. Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան, 2022թ. Գիտության և կրթության դերը պետության զարգացման գործում):

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, 3 գլուխներից, 6 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված նորմատիվ իրավական ակտերի ու գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջաբանում հիմնավորվում է թեմայի արդիականությունը և ատենախոսության աշխատանքի գիտական նորույթը, որոշակիացվում են վերջինիս մեթոդաբանական ու տեսական հիմունքները, նրա նպատակներն և խնդիրները, ձևակերպվում են պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները: Ներածությունում հիմնավորվում են աշխատանքի տեսական և գործնական կարևորությունը: Ներածությունը տեղեկություններ է պարունակում նաև հետազոտության արդյունքների փորձարկման վերաբերյալ:

Առաջին գլուխը՝ <<**Ազգերի ինքնորոշման իրավունքի և դրա, որպես իրավական սկզբունքի ծագումը, զարգացումը և բովանդակությունը**>>, կազմված է երկու պարագրաֆից:

Առաջին պարագրաֆը՝ <<**Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ծագումը և զարգացումը**>>, անդրադարձ է կատարվում ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի

ծագմանը և զարգացմանը՝ սկսած Հին Հունաստանի և Հին Հռոմի ժամանակներից մինչև մեր օրերը:

Երկրորդ պարագրաֆը՝ <<**Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման միջազգային իրավական սկզբունքի էությունը և բովանդակությունը**>>, անդրադառնում է ինքնորաշման իրավունքի՝ որպես միջազգային իրավունքի ***jus cogens*** սկզբունքի կայացմանը և վերջինիս էության բացահայտմանը:

Երկրորդ գլուխը՝ <<**Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացումը և մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հրամայականի անխախտելիությունը**>>, կազմված է երկու պարագրաֆից**:**

Առաջին պարագրաֆը՝ <<**Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության ինստիտուտի էվոլուցիան**>> մանրամասն անդրադառնում է այսօր աշխարհում գործող մարդու իրավունքների պաշտպանության կառուցակարգերի ծագման և հետագա զարգացման հիմնահարցերին:

Երկրորդ պարագրաֆը՝ <<**Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացմանը խոչընդոտող ցանկացած գործողություն, որպես մարդու իրավունքների պաշտպանության դեմ ուղղված մարտահրավեր**>>, անդրադառնում է իրենց ինքնորոշման իրավունքն իրագործած և սեփական պետությունը ստեղծելու ցանկություն ունեցող ազգերի և ժողովուրդների ամենատարբեր մակարդակներում ի հայտ եկող իրավունքների բազում խախտումներին:

Երրորդ գլուխը՝ <<**Արցախի Հանրապետությունում անձի իրավունքների միջազգային իրավական ապահովման հիմնախնդիրները՝ ազգային-ազատագրական պայքարի և ինքնիշխան պետություն ստեղծելու ճանապարհին**>>, կազմված է երկու պարագրաֆից:

<<**Միջազգային հանրային իրավունքը և ԱՀ բնակչության ազգային ազատագրական պայքարի իրավաչափության հարցը**>> վերտառությամբ առաջին պարագրաֆն անդրադառնում է այն հարցին, թե որքանով էր արցախահայության ազգային ազատագրական պայքարը համապատասխանում միջազգային իրավունքի իրավունքի նորմերին ու սկզբունքներին:

Պատմական փաստերի ներդման միջոցով ներկայացվել է, որ դեռևս հնագույն ժամանակներից Արցախը հայկական էր: Արցախյան ազգային-ազատագրական պայքարը, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի հայ ազգաբնակչության ձգտումն էր՝ խաղաղ միջոցներով, ԽՍՀՄ

համապատասխան օրենսդրության հաշվառմամբ և հենվելով միջազգային իրավունքի ***jus cogens*** սկզբունքների վրա իրականացնել իր բնական և անօտարելի ինքնորոշման իրավունքը:

Երկրորդ պարագրաֆը՝ <<**Արցախի Հանրապետությունում անհատի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջազգային իրավական երաշխիքները և դրանց ապահովման հետ կապված հիմնախնդիրները**>> նվիրված է արցախահայության այսօր գոյություն ունեցող խնդիրներին՝ կապված սեփական իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ:

Եզրակացությունում ներկայացվում է ատենախոսական աշխատանքի արդյունքները, որոնք հանգում են հետևյալին.

1. Ներկա բարդ աշխարաքաղաքական զարգացումների պայմաններում ազգամիջյան և միջպետական ցանկացած վեճ կամ իրավիճակ կարող է շատ արագ վերածվել լայնամաշտամբ պատերազմի: Ներկայումս խեղաթյուրվել է միջազգային իրավունքի կարգավորիչ առաքելությունը, առանձին պետություններ իրենց նպատակների և ոչ իրավաչափ շահերի համար կոպտորեն խախտում են նույնիսկ միջազգային իրավունքի ***jus cogens*** սկզբունքները, զանգվածաբար խախտվում են մարդու բոլոր իրավունքները և հիմնարար ազատությունները: Ստեղծված իրավիճակում առավել խոցելի են չճանաչված պետությունների քաղաքացիները, ուստի կենսականորեն անհրաժեշտ է չճանաչված, կամ այսպես կոչված վիճելի կարգավիճակ ունեցող տարածքներում մարդու իրավունքների պաշտպանությունը դիտել առաջնահերթ խնդիր և իրավունքների պաշտպանությունը չպայմանավորել տվյալ պետական միավորի միջազգայնորեն ճանաչված լինելու կամ ճանաչված չլինելու հանգամանքով:

Չճանաչված պետությունում բնակվող անձանց իրավունքներն առավել խոցելի են այն առումով, որ նրանք չեն կարող լիարժեք օգտվել իրավական պաշտպանության միջազգային իրավական գործիքակազմից: Մինչդեռ, ինչպես վկայում է միջազգային պրակտիկան, նրանց իրավունքները մի կողմից խախտվում է մետրապոլիայի կողմից, իսկ մյուս կողմից, եթե իրավունքների խախտումը կատարվում է սեփական իշխանության մարմինների կողմից, ապա նրանք զրկված են իրավունքների պաշտպանության միջազգային ինստիտուցիոնալ և դատական կառուցակարգերից օգտվելու հնարավորությունից:

2. Չճանաչված պետություններում մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված առկա խնդիրների լուծման համար, բացի միջազգային դատական ու քվազի դատական մարմիններին դիմելու հետ կապված հարցերը կարգավորելուց, ցանկալի է նաև, որպեսզի Եվրոպայի Խորհուրդը, ԵԱՀԿ-ը, ՄԱԿ-ը կամ ԵՄ այս հարցում օժտված լինեն վճռական լիազորություններով: Կարծում ենք, բավականին արդյունավետ միջոց կարող է հանդիսանալ վերոնշյալ միջազգային կառույցների կողմից չճանաչված պետությունների կարգավիճակին վերաբերող միջազգային բանակցությունների և այլ հանդիպումների ժամանակ, ի թիվս այլնի, ինքնորոշվող տարածքում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի քննարկումը: Ավելին, գտնում ենք, որ ԵԱՀԿ-ի կողմից իրականացվող բանակցային գործընթացն ոչ միայն պետք է պարտադիր զուգորդվի չճանաչված պետությունում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի ուսումնասիրությամբ, այլև դրա արդյունքներին տրվի համապատասխան գնահատական: Անհրաժեշտ է համեմատական վերլուծություն իրականացնել չճանաչված պետության քաղաքացիների և մետրապոլիայի քաղաքացիների իրավունքների պաշտպանվածության միջև: Մասնավորապես, պետք է համադրվի Ադրբեջանում առկա մարդու իրավունքների պաշտպանության վիճակը՝ Արցախում առկա մարդու իրավունքների հետ: Չենք կարծում, որ առավել բարենպաստ և պաշտպանված միջավայրում ապրող ԼՂՀ-ի բնակիչները կհամաձայնվեին ապրել խանական բարքեր և տոտալիտար քաղաքական ռեժիմ ունեցող Ադրբեջանի կազմում: Այսօրվա իրավիճակը, հենց այդ փաստի հավաստումն է:

3. Վերլուծելով ինքնորոշման իրավունքի վերաբերյալ դրույթներ պարունակող միջազգային իրավական փաստաթղթերը, հեղինակը գտնում է, որ այս փաստաթղթերից յուրաքանչյուրը պարունակում է մասնատված, հաճախ կրկնվող ձևակերպումներ: Մինչդեռ ճիշտ կլիներ եթե դրանցում ավելի ամբողջական և բազմակողմ բացահայտվեին ինքնորոշման իրավունքի միջազգային իրավական բովանդակության բոլոր տարրերը: Չնայած, առկա միջազգային իրավական փաստաթղթերից ենթադրվում է, որ դրանցում նախատեսված իրավունքները և ազատությունները տարածվում են բոլոր մարդկանց վրա, սակայն ինչպես նշվել է ատենախոսական հետազոտության մեջ, չճանաչված պետությունների քաղաքացիներն այսօր ըստ էության դուրս են մնացել միջազգային իրավունքի ներգործության շրջանակից:

4. Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային կոնվենցիաները, դաշնագրերը և մյուս իրավական ակտերը ունեն համապարտադիր

բնույթ, հետևաբար ինքնորոշման իրավունքի պաշտպանության հիմքում ընկած փաստաթղթերի կողմ հանդիսացող պետությունների կողմից դրանք բարեխիղճ կատարելը հրամայական բնույթի պարտավորությունը է: Հետևաբար այն ժողովուրդն, որին փորձում են ռազմական ուժի կիրառմամբ զրկել ինքնորոշման իր իրավունքից, իրավասու է ոչ միայն ինքնուրույն պայքարել իր այդ իրավունքի համար, այլ նաև դիմի մյուս պետություններին ռազմաքաղաքական օգնություն ստանալու խնդրանքով: Ասվածի համատեքստում սույն ատենախոսական հետազոտության հեղինակը գտնում է, որ առանձին պետությունների կողմից չճանաչված պետություններին ցույց տրվող քաղաքական, ֆինանսական և այլ բնույթի աջակցությունը պայմանավորված է ոչ միայն ազգային կամ բարեկամական զգացմունքային բնույթի համերաշխությամբ, այլ նաև տվյալ պետության կողմից իր միջազգային պայմանագրային պարտավորությունները բարեխիղճ կատարելու պատրաստակամությամբ:

5. Ատենախոսության հեղինակը գտնում է, որ դոկտրինալ մակարդակով բավարար խորությամբ չի լուսաբանվում չճանաչված պետություններում մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերը, մինչդեռ անհրաժեշտ է, որպեսզի միջազգային իրավունքով զբաղվող հեղինակավոր իրավաբան գիտնականները ևս մտահոգվեն չճանաչված պետությունների իրավազորության ներքո գտնվող մարդկանց իրավունքների երաշխավորման խնդիրներով: Այս առումով հավանաբար ճիշտ կլինի եթե հենց իրենք շահագրգիռ պետությունները, օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունը խրախուսի կամ կազմակերպի տարբեր երկրների հեղինակավոր իրավաբանների մասնակցությամբ միջազգային գիտաժողովներ և սեմինարներ նվիրված չճանաչված պետությունների իրավազորության ներքո գտնվող անձանց իրավունքների միջազգային մակարդակով պաշտպանության հարցերին:

6. Չճանաչված, այդ թվում Արցախի Հանրապետությունում գործող հասարակական քաղաքական կազմակերպությունները և մարդու իրավունքների պաշտպաններն, առկա աշխարհաքաղաքական բարդ, վտանգավոր և անկանխատեսելի զարգացումների պայմաններում պարտավոր են փորձել որքան հնարավոր է առավել միջազգայնացնել չճանաչված պետություններում մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրները: Մասնավորապես, անհրաժեշտ է ՄԱԿ-ի, ԵՄ կամ ԵՄ համապատասխան մարմիններին ներկայացուցիչների միջոցով Արցախի Հանրապետությունում

կազմակերպել մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մոնիթորինգ:

Ատենախոսության թեմայով հեղնակի կողմից հրապարակվել են հետևյալ գիտական աշխատանքները՝

1.Գրիգորյան Մ., Մարդու իրավունքների միջազգային-իրավական պաշտպանության հիմնախնդիրն Արցախի Հանրապետությունում, Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր 1/2017, էջ 67-72:

2.Толстых В.Л., Григорян М.А., Коваленко Т.С., Халабутенко О.А. Проблемы формирования и функционирования правовых систем непризнанных государств, Российский юридический журнал 3(120)/2018, ст. 36-44.

3.Толстых В.Л., Григорян М.А., Коваленко Т.С., Халабутенко О.А. Проблемы формирования и функционирования правовых систем непризнанных государств (окончание), Российский юридический журнал 4(121)/2018, ст. 43-55.

4.Tolstykh V., Grigoryan M., Kovalenko T. Legal systems of Post-Soviet Non Recognized States: Structural Problems/Russian Law Journal. 2-19.Vol.7. N 2.P. 81-100.(Scopus)

5. Գրիգորյան Մ., Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության դեմ ուղղված մարտահրավերները, Հանրային Կառավարում 2/2019, էջ 127-140:

6. Գրիգորյան Մ., Միջազգային հանրային իրավունքը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության ազգային-ազատագրական պայքարի իրավաչափության հարցը, Գիտական Արցախ 2(3)2019, էջ 306-316:

7. Գրիգորյան Մ., Մարդու իրավունքների պաշտպանության սահմանափակման միջազգային իրավական կարգավորումները՝ չճանաչված պետությունների միջազգային իրավասուբյեկտայնության հիմնախնդրի համատեքստում, Գիտական Արցախ 2(5)2020, էջ 58-72:

8. Գրիգորյան Մ., Միջազգային իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքների խախտումներն Արցախյան երրորդ պատերազմում, Երևան, Գիտական Արցախ, №3(10), 2021, 121-134:

9. Գրիգորյան Մ., Հարությունյան Ա., Արցախահայության հիմնարար իրավունքների խախտումներն Ադրբեջանի կողմից Արցախյան 3-րդ պատերազմի ընթացքում, Երևան, Գիտական Արցախ, №4(15), 2022, 55-68:

ГРИГОРЯН МАРИАМ АРАИКОВНА
ПРОБЛЕМА МЕЖДУНАРОДНО-ПРАВОВОЙ ЗАЩИТЫ ПРАВ ЧЕЛОВЕКА В КОНТЕКСТЕ ОСУЩЕСТВЛЕНИЯ ПРАВА НАЦИЙ И НАРОДОВ НА САМООПРЕДЕЛЕНИЕ

РЕЗЮМЕ

Если формирование и становление части существующих государств началось много веков назад в результате исторической эволюции, то подавляющее большинство современных государств состоялось в основном в XIX-XX веках в результате реализации принципа самоопределения наций и народов. Сразу после развала системы СССР и социалистических стран метрополии открыто отказались выполнять императивное требование принципа ***jus cogens*** о праве на самоопределение входящих в их состав субъектов и пытаются вплоть до применения оружия заблокировать право на самоопределение народов, стремящихся к независимости. Более того, борьба со стремящимся к самоопределению народом в настоящее время сопровождается также массовыми нарушениями прав и свобод его граждан.

Армянские и зарубежные авторы уже провели достаточно обширные и серьезные исследования относительно права наций и народов на самоопределение, однако они в основном относятся к политическим и международно-правовым аспектам права на самоопределение, между тем, в серьезном исследовании нуждается проблема защиты прав людей, которые начали процесс самоопределения и живут в странах, находящихся в статусе непризнанного государства.

Автор диссертационного исследования считает, что с точки зрения международного права совершенно неправомерно обусловливать вопрос защиты прав лиц, проживающих в непризнанных государствах, обстоятельством международной правосубъектности этого государства. Борьба народа, избравшего путь самоопределения, – это правовой процесс, а окончательное признание непризнанного государства – результат политической борьбы. Указанные процессы могут длиться десятки лет, в то время как международные конвенционные нормы прав и свобод человека действуют немедленно, постоянно и безоговорочно.

Актуальность кандидатской диссертации обусловлена тем, что, в отличие от опубликованных исследований по международно-правовой защите прав человека, в диссертации делается попытка изучить проблему международно-правовой защиты прав человека именно в контексте

правового статуса непризнанных государств. В диссертационном исследовании на основе конкретных примеров и фактов обосновано, что, как показал опыт борьбы наций и народов, борющихся за свое право на самоопределение на территории СССР и бывшей Югославии, лица, входящие в состав населения борющейся нации или народа, с начального этапа борьбы и до ее окончания, провозглашения собственного государства и его международно-правового признания, по сути, лишаются возможности защищаться в соответствии с нормами международного публичного права.

Актуальность темы данной диссертации обусловлена также тем обстоятельством, что уже очевидным становится факт, что сегодня стремящиеся к независимости народы реализуют свое право на самоопределение в условиях развала международного правопорядка, а метрополии пытаются с особой жестокостью и грубыми нарушениями международного права бороться против стремящихся к самоопределению народов и прав их граждан.

Основной целью исследования кандидатской диссертации является выявление и изучение проблем, связанных с международно-правовой защитой прав человека в результате реализации права наций и народов на самоопределение, а также выявление проблем, связанных с международно-правовой защитой прав человека в непризнанных государствах, образовавшихся в результате распада СССР, бывшей Югославии, в том числе, в Республике Арцах, на пути национально-освободительной борьбы и создания суверенного государства.

MARIAM ARAYIK GRIGORYAN

PROBLEM OF INTERNATIONAL LEGAL PROTECTION OF HUMAN RIGHTS IN THE CONTEXT OF THE IMPLEMENTATION OF THE RIGHT OF NATIONS AND PEOPLES TO SELF-DETERMINATION

SUMMARY

If the formation and becoming of some of the existing states began many centuries ago as a result of historical evolution, the vast majority of the current states took place mainly in the XIX-XX centuries as a result of the implementation of the principle of self-determination of nations and peoples. Immediately after the collapse of the system of the USSR and the socialist countries, the metropolises openly refused to fulfill the imperative requirement of the ***jus cogens*** principle on the right to self-determination of their constituent entities and are trying, up to the use of weapons, to block the right to self-determination of peoples seeking independence. In more detail, the struggle against the people striving for self-determination is currently accompanied by massive violations of the rights and freedoms of its citizens.

Domestic and foreign authors have already conducted quite extensive and serious research on the right of nations and peoples to self-determination, but they mainly relate to the political and international legal aspects of the right to self-determination, meanwhile, the problem of protecting the rights of people who have begun the process of self-determination and live in countries that are still in the status of an unrecognized state.

The author of the dissertation research believes that from the point of view of international law, it is completely illegal to condition the issue of protecting the rights of persons living in unrecognized States on the circumstance of the international legal personality of this State. The struggle of the people who have chosen the path of self-determination is a legal process, and the final recognition of an unrecognized state is the result of a political struggle. These processes can even last for decades, while international convention norms of human rights and freedoms act immediately, permanently and unconditionally.

The relevance of the candidate's dissertation is due to the fact that, unlike published studies on the international legal protection of human rights, the author of the dissertation tried to study the problem of international legal protection of human rights in the context of the legal status of unrecognized states. It is substantiated by concrete examples and facts in the dissertation research, meanwhile, as the experience of the struggle of nations and peoples

fighting for their right to self-determination on the territory of the USSR and the former Yugoslavia has shown, from the first moment of the struggle until the end of the proclamation of their own state and its international legal recognition, persons who are part of the population of the struggling nation or people, in fact, they are deprived of the opportunity to defend themselves in accordance with the norms of public international law.

The relevance of this dissertation is also due to the fact that peoples striving for independence exercise their right to self-determination in conditions when, as a result of the collapse of the existing world order and the undermining of the international legal order operating on Earth, existing metropolises are trying with particular cruelty and gross violations of international law to fight against peoples striving for self-determination and the rights of their citizens.

The main purpose of the research of the PhD thesis is to identify and study problems related to the international legal protection of human rights as a result of the realization of the right of nations and peoples to self-determination, as well as to identify problems related to the international legal protection of human rights in unrecognized states formed as a result of the collapse of the USSR, the former Yugoslavia, including in the Republic of Artsakh on the path of national liberation struggle and creation of a sovereign state.